

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստի

(Երևան, 27-29 սեպտեմբերի, 2017)

Տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստը (այսուհետ՝ հանձնաժողով) կայացավ Երևանում 2017թ. սեպտեմբերի 27-29-ն ընկած ժամանակահատվածում:

Հանձնաժողովը համանախագահեցին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տարածքային կառավարման և զարգացման նախարար Ն.Գ. պարոն Դավիթ Լոքյանը և Եգիպտոսի Արաբական Հանրապետության (ԵԱՀ) ներդրումների և միջազգային համագործակցության նախարար Ն.Գ. տիկին Սահար Նասրը:

Հայկական և եգիպտական պատվիրակությունների կազմերը (այսուհետ՝ երկու կողմեր) կցված են արձանագրության Հավելված 1-ում և Հավելված 2-ում:

ԵԱՀ ներդրումների և միջազգային համագործակցության նախարար Ն.Գ. տիկին Սահար Նասրը հանդիպումներ է ունեցել՝

Հայաստանի Հանրապետության Նախագահ պրն Սերժ Սարգսյանի,

ՀՀ վարչապետ պրն Կարեն Կարապետյանի,

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար պրն Սուրեն Կարայանի,

ՀՀ արտաքին գործերի նախարար պրն Էդվարդ Նալբանդյանի,

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար պրն Դավիթ Լոքյանի հետ:

Քննարկումները տեղի ունեցան բարեկամական և կառուցողական մթնոլորտում՝ արտացոլելով երկու երկրների միջև գոյություն ունեցող պատմական սերտ հարաբերությունները և նրանց ցանկությունը՝ խորացնելու և ամրապնդելու երկկողմ հարաբերությունները հավասարության և փոխշահավետության հիմքի վրա:

Հանձնաժողովի նիստից հետո տեղի ունեցավ հայ-եգիպտական գործարար համաժողովը: Երկու կողմերը կարևորեցին համատեղ Գործարար խորհրդի ստեղծումը՝ խթանելու և խորացնելու առևտուրն ու ներդրումները երկու երկրների միջև:

Հանձնաժողովի 5-րդ նիստն անցավ ջերմ փոխըմբռնման մթնոլորտում՝ արտացոլելով երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունները և նշանավորվեց երկու կողմերի ցանկությամբ՝ ամրապնդելու, էլ ավելի զարգացնելու և դիվերսիֆիկացնելու տնտեսական և առևտրային հարաբերությունները երկու երկրների տնտեսությունների փոխշահավետ տարբեր ոլորտներում:

Երկու կողմերը համոզմունք հայտնեցին, որ հանձնաժողովի 5-րդ նիստը դրական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև երկկողմ համագործակցությունը հետագայում զարգացնելու համար: Հանդիպման ընթացքում երկու կողմերը վերահաստատեցին Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև գոյություն ունեցող երկկողմ բարեկամական հարաբերությունները:

Նրանք նաև հայտնեցին իրենց մտադրությունը շարունակելու աջակցել միմյանց նախաձեռնությունները և թեկնածուներին միջազգային հարթակներում, ինչպես նաև պարբերաբար անցկացնելու խորհրդակցություններ Միացյալ ազգերի կազմակերպությունում իրենց ներկայացուցչությունների միջև և այլ միջազգային ատյաններում:

Հանձնաժողովի հանդիպումների ընթացքում երկու կողմերը քննարկեցին 2005թ. դեկտեմբերին Կահիրեում կայացած հանձնաժողովի 4-րդ նիստում ընդունված առաջարկությունների կատարման ընթացքը:

Երկու կողմերը համաձայնեցին, որ նրանց միջև համագործակցությունը կարող է ծավալվել տեխնիկական համագործակցության ձևով, որը կներառի հաստատությունների միջև հմտությունների և տեխնոլոգիաների փոխանակումը, գիտական համագործակցության ընդլայնումը, ինչպես նաև առևտրային և ներդրումային կապերի խրախուսումն ու համատեղ ձեռնարկությունների ստեղծումը:

Հաշվի առնելով, որ կողմերը պատրաստակամություն հայտնեցին անելու առավելագույնը տնտեսական համագործակցությունը ընդլայնելու և խորացնելու նպատակով՝ նրանք նաև պայմանավորվեցին հորդորել իրավասու մարմիններին համատեղ ջանքերով ապահովել

Ֆինանսական միջոցներ, որոնք անհրաժեշտ են երկկողմ տնտեսական համագործակցության շրջանակում տարբեր նախագծեր իրականացնելու համար: Վերոնշյալ համագործակցությունը պետք է ներառի երկու կողմերի պետական կամ մասնավոր միջոցներից, ինչպես նաև երրորդ կողմից՝ պետությունների և միջազգային ու տարածաշրջանային ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսավորվող նախագծեր: Կողմերը բարձրացրեցին նաև եռակողմ համագործակցություն ծավալելու հարցը:

Երկու երկրների տնտեսությունների ներկա վիճակի և հեռանկարների գնահատում

Հանդիպման ընթացքում երկու համանախագահները տեղեկատվություն փոխանակեցին իրենց երկրներում տիրող տնտեսական իրավիճակի մասին: Նրանք նաև նշեցին, որ անհրաժեշտ է համատեղ աշխատել՝ մեծացնելու երկկողմ առևտուրն ու ներդրումները և հետագայում ավելացնելու բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցերը:

Երկու կողմերը նաև նկատեցին, որ կան բազմաթիվ հեռանկարային համագործակցության ոլորտներ, և երկու երկրների համեմատական առավելությունները թույլ են տալիս ընդլայնելու համագործակցությունը:

Երկու կողմերը պայմանավորվեցին համատեղ ջանքերով ընդարձակել համագործակցությունը հետայսու նշված ոլորտներում:

1. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Առևտուր

Երկու կողմերը արձանագրեցին, որ Հայաստանի և Եգիպտոսի միջև առկա է համագործակցության լայն սպեկտր առևտրի և տնտեսության բնագավառում և կարևորեցին երկկողմ առևտրի խթանումը:

Երկու կողմերն արտահայտեցին փոխադարձ ցանկություն փոխանակվելու արտահանվող ապրանքների ցանկերով, որոնք կարող են իրացվել երկու երկրներում, օրինակ, Եգիպտոսը ողջունում է արտահանումը պտուղ-բանջարեղենի, ցիտրուսային մրգերի, սննդի արդյունաբերության, հում բամբակի և դեղագործության ոլորտներում:

Եգիպտական կողմը կարևորեց առաջարկվող Եվրասիական տնտեսական միության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև ազատ առևտրի համաձայնագրի կնքման բանակցությունների մեկնարկը: Ուստի, եգիպտական կողմը հայցում է հայկական կողմի աջակցությունն այս հարցում:

Երկու կողմերը համաձայնեցին ջանքեր գործադրել ընդլայնելու գործարար շրջանակների մասնակցությունը երկու երկրներում անցկացվող առևտրային ցուցահանդեսներին և առաքելություններին: Այս առիթով երկու կողմերը պետք է տարեկան կտրվածքով միմյանց տրամադրեն իրենց երկրներում կազմակերպվող ցուցահանդեսների և առևտրի առաջխաղացման միջոցառումների ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Եգիպտական կողմը հայկական կողմին հրավիրեց մասնակցելու 2018թ. մարտի 14-23-ը Կահիրեում անցկացվելիք 51-րդ միջազգային ցուցահանդեսին:

Ներդրումներ

- Ընդլայնել ներդրումային համագործակցությունը երկու երկրների բիզնես համայնքների միջև ԵԱՀ ներդրումների և ազատ գոտիների գլխավոր լիազոր մարմնի (GAFI) և Հայաստանի զարգացման հիմնադրամի միջոցով՝ նպատակ ունենալով տեղեկություններ փոխանակել Եգիպտոսում և Հայաստանում ներդրումային միջավայրի մասին, ինչպես նաև կազմակերպել այցեր բիզնես պատվիրակությունների ու ներդրողների համար՝ ապահովելու նրանց մասնակցությունը երկու երկրներում անցկացվող ներդրումային միջոցառումներին, ինչպես նաև խթանել նոր գործընկերությունների մեկնարկը երկկողմ հետաքրքրությունների շրջանակներում:

- Փորձի և տեղեկատվության փոխանակում երկու կողմերի միջև հատկապես ազատ գոտիների ոլորտում:

Սուեզի ջրանցքի տնտեսական գոտի

Սուեզի ջրանցքը, ունենալով ռազմավարական տեղակայում, տեղական և տարածաշրջանային շուկաների հասանելիություն, որակյալ աշխատուժ և բիզնեսին միտված իսկական միականգառ առևտրի (one stop shop) հնարավորություն, պատիվ ունի հրավիրելու Հայաստանի գործարար հանրությանը՝ ծանոթանալու տարբեր ոլորտներում առկա ներդրումային միջավայրին, ներառյալ արտադրությունը, ենթակառուցվածքները, կապը և տեղեկատվական տեխնոլոգիաները, իր 4 արդյունաբերական գոտիներում (Արևելյան Պորտ Սաիդ, Արևմտյան Քանթարա, Արևելյան Իսմահիլա և Սոխնա) և 6 նավահանգիստներում (Պորտ Սաիդ, Արևելյան Պորտ Սաիդ, Ադաբիա, Սոխնա. Էլտոր, Էլարիշ):

2. Կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ

Կողմերը պայմանավորվեցին ակտիվացնել համագործակցությունը կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի արտադրության, տեխնոպարկերի զարգացման ոլորտներում, որը հնարավորություն կտա օգտվել տարբեր առավելություններից՝ ապահովելով հայկական և եգիպտական տեխնոլոգիական ընկերությունների ազատ մուտքը դեպի նոր շուկաներ, ինչպիսիք են Եվրասիական տնտեսական միությունը, Աֆրիկան, ինչպես նաև Միջին Արևելքն ու Հյուսիսային Աֆրիկան:

Կողմերը քննարկեցին Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության միջև տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի նախագիծը:

Կողմերը պայմանավորվեցին քայլեր ձեռնարկել վերոնշյալ հուշագիրը հնարավորինս սեղմ ժամկետում ստորագրելու և այն կյանքի կոչելու նպատակով:

Եգիպտոսի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը պատրաստ է Հայաստանի իրավասու մարմինների հետ դիտարկելու հեռահաղորդակցման, էլեկտրոնիկայի արտադրության և տեխնոպարկերի ստեղծման, խելացի կրթության/ուսուցման, նորարարության/ձեռնարկատիրության, ինչպես նաև կիրքերանվտանգության և «խելացի կառավարության» ոլորտներում գիտելիքի փոխանակման և կարողությունների զարգացման հնարավորությունները:

3. Էներգետիկա

- **Էլեկտրաէներգիա
Երկու կողմերը համաձայնեցին.**

Փորձի և տեղեկատվության փոխանակում հետևյալ ոլորտներում.

- Տեխնիկական ուսումնասիրություններ և էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում
- Էլեկտրակայանների շահագործում և սպասարկում
- Էլեկտրոկայանների շահագործման տնտեսական և բնապահպանական ուսումնասիրություններ

- Էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում
- Արևային էներգիա, հատկապես ֆոտոգալվանային
- Հողմակայանների շահագործում և սպասարկում

- Կարողությունների հզորացում

- Խրախուսել համագործակցությունը էլեկտրական սարքավորումների տեղական արտադրության ոլորտում
- Գազի ոլորտում. կողմերը կխթանեն երկու կողմերի միջև կապերի ամրապնդումը գազի ոլորտում, մասնավորապես մարդկային ռեսուրսների կատարելագործման ծրագրերը, մասնակցությունը փորձի փոխանակման նպատակով երկու երկրներում անցկացվող գիտաժողովներին և համաժողովներին:

4. Զբոսաշրջություն

- Երկու երկրներում զբոսաշրջային տեղեկատվության, գովազդային նյութերի և վիճակագրության փոխանակում
- Երկու երկրներում անցկացվող զբոսաշրջային տոնավաճառներին, փառատոններին և միջոցառումներին փոխադարձ մասնակցություն
- Խրախուսել զբոսաշրջային ոլորտի ներկայացուցիչների, լրագրողների և լրատվամիջոցների ներկայացուցիչների փոխայցելությունները՝ երկու երկրների զբոսաշրջային ներուժին ծանոթանալու նպատակով:
- Զբոսաշրջային ներդրումների հնարավորությունների, զբոսաշրջության ներդրման ոլորտում խթանների և երաշխիքների փոխանակում երկու երկրներում:
- Խրախուսել երկու երկրների զբոսաշրջային և ճանապարհորդական գործակալությունների միջև համագործակցությունը՝ արտոնյալ պայմաններով զբոսաշրջային ծրագրերի կազմակերպմամբ:
- Ավելի շատ թվով հայ զբոսաշրջիկների ներգրավելու համար պատրաստված տարբեր ծրագրեր, ներառյալ զբոսաշրջության տարբեր տեսակներ:
- Փորձի և տեղեկատվության փոխանակում զբոսաշրջության ճգնաժամային կառավարման ոլորտում

5. Գյուղատնտեսություն

Կողմերը պայմանավորվեցին՝

- ուսումնասիրել գյուղատնտեսական հումքի վերամշակման արդյունաբերության բնագավառում համատեղ ձեռնարկություններ ստեղծելու հնարավորությունները,
- քննարկել ՀՀ-ում արտադրված պարենային և գյուղատնտեսական ապրանքների, մասնավորապես՝ պահածոների, ոչ ոգելից խմիչքների, քաղցրավենիքի՝ Եգիպտոս արտահանելու հնարավորությունները,
- նկատի ունենալով Հայաստանում իրականացվող կենդանիների «հալալ» մակնշմամբ սպանող՝ քննարկել Հայաստանից Եգիպտոս մտնող արտահանման հնարավորությունները,
- փոխանակել տեղեկատվություն երկու երկրներում անցկացվող միջազգային գյուղատնտեսական ցուցահանդեսների, տոնավաճառների, համաժողովների վերաբերյալ:

6. Մշակույթ

- Երկու կողմերն արտահայտեցին իրենց գոհունակությունը բարեկամական երկու երկրների միջև առկա արդյունավետ մշակութային հարաբերություններից, վեր հանեցին հետագա համագործակցության ներուժը և համաձայնեցին ակտիվացնել ջանքերը Մշակութային փոխանակման ծրագրերի ամբողջական իրականացման ուղղությամբ:
- Երկու կողմերը համաձայնեցին խթանել և դյուրինացնել երկու կողմերի մշակութային գործիչների փոխայցելությունները և հետաքրքրություն ցուցաբերել մշակույթի կառավարման և մշակութային արդյունաբերության ոլորտում համատեղ գործակցության նոր հնարավորությունների վերհանման ուղղությամբ:
- Մշակույթի բնագավառում համագործակցությունը մասնավորեցված է «ՀՀ մշակույթի նախարարության և ԵԱՀ մշակույթի նախարարության միջև 2017-2020թթ. մշակութային համագործակցության մասին» գործնական ծրագրում և «Հայաստանի ազգային գրադարանի և ԵԱՀ Ալեքսանդրինայի գրադարանի միջև» փոխըմբռնման հուշագրում, որոնք ստորագրվելու են 5-րդ նիստի ավարտին:
- 2018թ. Հայաստանում Եգիպտական մշակութային օրեր և 2020թ. Եգիպտոսում հայկական մշակութային օրեր կազմակերպելու հնարավորությունը,

- մշակութային ոլորտում (երաժշտություն, պար, թատրոն, կինեմատոգրաֆիա, ցուցադրություն) փոխայցելությունների և փոխանակման ծրագրերի կազմակերպման և իրականացման հնարավորությունը, ինչպես նաև հայկական և եգիպտական արշավախմբերի՝ հնագիտական պեղումներում փոխադարձաբար մասնակցելու հնարավորությունը:

7. Առողջապահություն, դեղագործական արդյունաբերություն

Առողջապահություն

- Բուժաշխատողների փոխայցելություններ հիվանդանոցների կառավարման, առաջնային բժշկական օգնության և կանխարգելիչ դեղերի ոլորտներում փորձի փոխանակման նպատակով:
- Համագործակցություն առողջապահության տարբեր ոլորտներում բժշկական, պարամեդիկ, դեղագործների և բուժքույրերի ուսուցման բնագավառում:
- Երկու երկրների առողջապահության նախարարությունների մասնագիտացված բժշկական ինստիտուտների, գիտահետազոտական և վերապատրաստման ինստիտուտների միջև ուղիղ համագործակցության խրախուսում:
- Համագործակցություն բուժքույրական անձնակազմի վերապատրաստմանն ուղրտում հետևյալ ուղղություններով. ինտենսիվ խնամք, բուժքույրական ծառայությունների կառավարում, նորածինների անհետաձգելի բժշկական օգնություն և հիվանդների խնամք:
- Երկու երկրներում բուժքույրական փորձագետների և փորձագիտական գիտելիքների փոխանակում՝ ուժեղ կողմերի և յուրաքանչյուր երկրի մարդկային ռեսուրսների կարիքների բացահայտման նպատակով:
- Համագործակցություն դեղորայքային արդյունաբերության, որակի վերահսկման և դեղորայքի ու կենսաբանական արտադրանքի որակի ապահովման ոլորտներում:
- Երկու երկրներում դեղագործական արտադրանքի գրանցման ընթացակարգերի դյուրինացում և բժշկական սարքավորումների և դեղորայքային համատեղ արտադրության խրախուսում:
- Բժշկական սարքավորումներ և դեղագործական ընկերություններ ներկայացնող գիտական գրասենյակների ստեղծման խրախուսում:
- Համագործակցություն կանխարգելիչ բժշկության և էնդեմիկ հիվանդությունների փորձի միջոցով վարակիչ հիվանդությունների և պարազիտներով փոխանցվող հիվանդությունների տարածման կանխարգելման ոլորտում:

Դեղագործական արդյունաբերություն (VACSERA)

- Երկու կողմերը քննարկեցին պատվաստանյութերի առևտրի և արտադրության ոլորտներում համագործակցության հնարավորությունը:
- Եգիպտական կողմը առաջարկեց կազմակերպել հայ փորձագետների ուսուցում պարարտանյութերի արտադրության ոլորտում GMP չափանիշների համաձայն:

8. Երիտասարդություն

Հայաստանի սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Եգիպտոսի երիտասարդության և սպորտի նախարարությունը ցանկություն հայտնեցին ընդլայնել և ամրապնդել երկու երկրների միջև երիտասարդության բնագավառում բարեկամության և համագործակցության կապերը և աշխատել երկու կողմերի հետ երիտասարդության ոլորտում նախատեսվող փոխըմբռնման հուշագրի ստորագրման և նրանում ներառված դրույթների ամբողջական իրագործման համար:

9. Կրթություն

Երկու կողմերը համաձայնեցին՝

1. խթանել երկու երկրների միջև ուղիղ համագործակցությունը հետագա երկկողմ համաձայնագրերի ստորագրման համար,

2. փոխանակել ուսումնական ծրագրերը,

3. մշակել ծրագրեր ընդհանուր հետաքրքրություն ունեցող համալսարանների միջև,

4. կազմակերպել փոխայցելություններ և փորձի փոխանակում երկու երկրների համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմերի և ուսանողների միջև կարողությունների զարգացման ուղղությամբ,

5. Երկու կողմերը քննարկեցին և համաձայնեցին ստորագրել ՀՀ կառավարության և ԵԱՀ կառավարության միջև կրթության և գիտության ոլորտում -համագործակցության մասին 2017-2020 թթ. ծրագիրը մոտ ապագայում:

10. Շրջակա միջավայր

Երկու կողմերը համաձայնեցին համագործակցել հետևյալ ոլորտներում.

1 - Տեղեկատվության և փորձի փոխանակման հարթակի ստեղծում և կարողությունների զարգացման ծրագրերի իրականացում՝ պահպանվող տարածքների համալիր ցանցի մշակման, մոնիտորինգի և կենսաբազմազանության պահպանման նպատակով՝ հատուկ ուշադրություն դարձնելով՝

ա. բնական ռեսուրսների կառավարման տարբեր մոտեցումներ, այդ թվում տեղական համայնքների արդյունավետ ներգրավմամբ,

բ. պահպանվող տարածքների հիմնում և կառավարում, կառավարման արդյունավետության գնահատում,

գ. շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում միջազգային բազմակողմ համաձայնագրերի, միջազգային պարտավորությունների կատարում,

դ. կենսաբազմազանության մոնիտորինգի և պահպանման պլանների, ծրագրերի և նախաձեռնությունների մշակում ու իրականացում՝ ուշադրություն հատկացնելով նոր արտակարգ մարտահրավերներին և միջազգային պարտավորություններին:

2 – Աղբահանություն (համայնքային, գյուղատնտեսական, վտանգավոր և այլն)

3 – Բնապահպանական մոնիտորինգ

4 - Կլիմայի փոփոխության վրա ազդեցություն (մեղմացում և հարմարեցում):

11. Համագործակցություն շինարարության և բնակարանաշինության ոլորտում

Հայկական կողմը պատրաստակամություն հայտնեց համագործակցել Եգիպտական կողմի հետ Եգիպտոսում տարբեր նախագծերի իրականացման աշխատանքներին մասնակցելու միջոցով, հատկապես բնակարանաշինության, ճանապարհների, կամուրջների կառուցման ոլորտում:

12. Այլ հարցեր

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը և Եգիպտոսի Արաբական Հանրապետության ներդրումների և միջազգային համագործակցության նախարարությունը հանդիսանում են առանցքային

կետեր միջկառավարական համատեղ հանձնաժողովի շրջանակներում տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության ծավալման համար:

13. Համագործակցություն իրավապայմանագրային ոլորտում

Կողմերը ընդգծեցին իրավապայմանագրային բազան ընդլայնելու կարևորությունը՝ դիվերսիֆիկացնելու երկկողմ հարաբերությունները և համաձայնեցին հետևյալի շուրջ.

Նախապատրաստել ներքոնշյալ ոլորտում համագործակցության համաձայնագիր. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության ոլորտում համագործակցության» 2017-2020թթ. գործնական ծրագրի նախագիծը:

ստորագրեցին՝

«Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության ներդրումների և միջազգային համագործակցության նախարարության միջև ներդրումների ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը,

«ՀՀ ազգային արխիվի և ԵԱՀ ազգային գրադարանի և արխիվի միջև արխիվային գործի բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը,

Հայաստանի ազգային գրադարանի և ԵԱՀ Ալեքսանդրինայի գրադարանի միջև» փոխըմբռնման հուշագիրը,

«ՀՀ մշակույթի նախարարության և ԵԱՀ մշակույթի նախարարության միջև 2017-2020թթ. մշակութային համագործակցության մասին» գործնական ծրագիրը,

«ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության և ԵԱՀ երիտասարդության և սպորտի նախարարության միջև երիտասարդության ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը,

«Երևանի պետական համալսարանի և Կահիրեի համալսարանի միջև ակադեմիական համագործակցության մասին» համաձայնագիրը:

14. Փակման խոսք

Երկու կողմերը պայմանավորվեցին հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել Կահիրեում: Հստակ ժամկետները կհամաձայնեցվեն դիվանագիտական ուղիներով:

Ստորագրված է 2017 թվականի սեպտեմբերի 29-ին Երևանում, երկու բնօրինակով՝ անգլերեն լեզվով, երկու օրինակները հավասարազոր են:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության
անունից՝**

**Եգիպտոսի Արաբական
Հանրապետության
կառավարության անունից՝**

**Հայաստանի Հանրապետության
տարածքային կառավարման և
զարգացման նախարար
պարոն Դավիթ Լոքյան**

**Եգիպտոսի Արաբական Հանրապետության
ներդրումների և միջազգային
համագործակցության նախարար
դոկտոր Սահար Նասր**

Տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստի հայկական պատվիրակության ցուցակ

1. **Ն. Գ. պարոն Դավիթ Լոքյան** – ՀՀ ՏԿԶ նախարար, հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ
2. **Պարոն Ռոբերտ Հարությունյան** - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ, հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահի տեղակալ
3. **Ն.Գ. պարոն Արմեն Մելքոնյան** – Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան
4. **Պարոն Բորիս Դեմիրխանյան** - ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ
5. **Պարոն Արմեն Հարությունյան** - ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
6. **Պարոն Տիգրան Սահակյան** – ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
7. **Պարոն Արամ Բադալյան** - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ
8. **Տիկին Լուսինե Քարամյան** - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
9. **Պարոն Արմեն Այվազյան** - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ
10. **Պարոն Արկադի Պապոյան** - ՀՀ կրթության և գիտության նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ
11. **Պարոն Օրի Ալավերդյան** - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ

12. **Պարոն Վահագն Աֆյան** – ՀՀ Նախագահի աշխատակազմի արտաքին կապերի վարչության խորհրդատու
13. **Տիկին Քրիստինե Գրիգորյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ
14. **Պարոն Աշոտ Մկրտչյան** – ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ
15. **Պարոն Հրաչյա Փոլադյան** - ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի Մերձավոր և Միջին Արևելքի վարչության, Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրների և Իսրայելի բաժնի պետ (հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական կողմի քարտուղար)

Տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստի եգիպտական պատվիրակության ցուցակ

1. **Ն. Գ. տիկին Սահար Նասր** – ԵԱՀ ներդրումների և միջազգային համագործակցության նախարար
2. **Ն. Գ. պարոն Ռեդա Բեյբարս** – ԵԱՀ ներդրումների և միջազգային համագործակցության նախարարի խորհրդական, արտակարգ և լիազոր դեսպան, հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահի տեղակալ
3. **Ն. Գ. պարոն Մաաթի Թարեք** – Հայաստանի Հանրապետությունում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան
4. **Պարոն Հասան Շաուքի** –լիազոր նախարար, ԵԱՀ արտաքին գործերի նախարարության Կենտրոնական և Հարավային Եվրոպայի բաժանմունքի տնօրեն
5. **Պարոն Հասան Աբդելմոնեմ Ամին** – ԵԱՀ ներդրումների և միջազգային համագործակցության նախարարության Արևելյան Եվրոպայի հետ հարաբերությունների վարչության պետ
6. **Պարոն Խալեդ Մոհամեդ** – ԵԱՀ ներդրումների և միջազգային համագործակցության նախարարի գրասենյակի վարիչ
7. **Տիկին Նուրհան Ահմեդ Մոհամեդ Էլ-Սայիդ** – ԵԱՀ ներդրումների և միջազգային համագործակցության նախարարության Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների տնտեսագետ
8. **Պարոն Շերիֆ Շաֆիա** – Ներդրումների և ազատ գոտիների գլխավոր տեսչության ներդրումների խրախուսման վարչության պատասխանատու
9. **Տիկին Բրիհան Ջիդան** – Ներդրումների և ազատ գոտիների գլխավոր տեսչության կենտրոնական վարչության միջազգային համագործակցության հարցերով մասնագետ

10. **Տիկին Ֆաթմա Մադբուլի** – Առևտրի եւ արդյունաբերության նախարարության Արևելյան Եվրոպայի վարչության պետ
11. **Պարոն Հեշամ Մուրադ** – Մշակույթի նախարարի առաջին տեղակալ, Միջազգային մշակութային համագործակցության գործակալության պետ
12. **Գեներալ, բժիշկ Մամդուհ Բահնասաուի** - «Վաքսերա» կենսաքիմիական և պատվաստանյութերի հոլդինգի խորհրդի նախագահ
13. **Պարոն Շերիֆ Շահին** – Սուեզի ջրանցքի զարգացման տնտեսական հանձնաժողովի արտաքին մշակութային հարաբերությունների բաժնի պետ